## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 56-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝

Երանոս համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Երանոս համայնքի ավագանու 2021թվականի սեպտեմբերի 27-ի N 10 հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 22-ի <<Երանոս համայնքի բյուջեն հաստատելու մասին>> N 2-Ն որոշման հավելվածում փոփոխություններ կատարելու մասին
/Զեկ.՝համայնք ղեկավար՝Ս. Բավեյան/

2) <<Երանոս համայնքի թիվ 7-րդ փողոցի հեղեղատարի անցման կառուցման>>և <<Երանոս համայնքի Համալիր թաղամասը սնուցող խմելու ջրագծի հատվածի հիմնանորոգման>> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար մեկ անձից գնում կատարելու թույլտվություն տալու մասին
/Զեկ.՝համայնքիղեկավար՝Ս.Բավեյան/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 57-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի<< ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝
Երանոս համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 22-ի << Երանոս համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 2-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Համայնքի վարչական բյուջեի փոփոխությունները՝

1. Երանոս համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից (4891 հոդված) 3778000 ( երեք միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար ) ՀՀ դրամ պակասեցնել և տեղափոխել գյուղատնտեսության ոլորտի (4.2..1) 4657 հոդված՝ կապիտալ ներդրում կատարելու համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման, անասնապահական փարախների և ջրարբիացման համակարգի կառուցապատման:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 58-Ա

### <<ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՀԵՂԵՂԱՏԱՐԻ ԱՆՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ>> ԵՎ <<ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԼԻՐ ԹԱՂԱՄԱՍԸ ՍՆՈՒՑՈՂ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ>>ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,<<Գնումների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

Երանոս համայնքի ավագանին որոշում է.

1. <<Երանոս համայնքի թիվ 7-րդ փողոցի հեղեղատարի անցման կառուցման>>և <<Երանոս համայնքի Համալիր թաղամասը սնուցող խմելու ջրագծի հատվածի հիմնանորոգման>> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար մեկ անձից գնում կատարելու թույլտվություն համար տալ համաձայնություն:
2. <<Երանոս համայնքի թիվ 7-րդ փողոցի հեղեղատարի անցման կառուցման>> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գնման պայմանագիրը կնքել <<ՍԱՄ ՆԱԽԱԳԻԾ>>ՍՊԸ-ի հետ, <<Երանոս համայնքի Համալիր թաղամասը սնուցող խմելու ջրագծի հատվածի հիմնանորոգման>> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գնման պայմանագիրը կնքել <<ԵՎՐՈ ՆԱԽԱԳԻԾ>>ՍՊԸ-ի հետ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՔԱՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ**